

Տևողությունը – 150 րոպե

1. Քանի՞ տասնիկ է ունեցել ձեր տասնիկի պապիկը:

- 1) 2                      2) 8                      3) 16                      4) այլ պատասխան

2. Գտնել  $12^{12}$  թվի բաժանարարների քանակը:

- 1) 13                      2) 169                      3) 325                      4) այլ պատասխան

3. Գտնել  $a, b, c$  բնական թվերի գումարի ամենափոքր հնարավոր արժեքը, եթե հայտնի է, որ  $(ax^b)^c = 64x^{12}$ :

- 1) 10                      2) 11                      3) 16                      4) այլ պատասխան

4. Մարինեն, Նարինեն ու Կարինեն հագել էին կարմիր, կապույտ, սպիտակ գույնի շրջազգեստներ և կոշիկներ: Հայտնի է, որ միայն Մարինեի շրջազգեստի և կոշիկի գույներն են համընկնում: Նարինեի հագին կապույտ գույն չկար, իսկ Կարինեն հագել էր սպիտակ կոշիկներ: Ի՞նչ գույնի է Կարինեի շրջազգեստը:

- 1) սպիտակ                      2) կապույտ                      3) կարմիր                      4) հնարավոր չէ որոշել

5. Գումարման գործողության մեջ գույգ թվանշանները փոխարինել են \*-երով:

$$\begin{array}{r} 1 * 7 \\ + 3 * 5 \\ \hline 3 * 1 \\ * 9 3 \end{array}$$

Գտնել \*-երի գումարը:

- 1) 15                      2) 16                      3) 24                      4) այլ պատասխան

6. Դպրոցի 5-րդ դասարաններում սովորում են 270, իսկ 6-րդ դասարաններում՝ 180 աշակերտներ: Հայտնի է, որ 5-րդ դասարանցիների մեջ տղաների և աղջիկների քանակը հարաբերում է ինչպես 5:4, իսկ 6-րդ դասարանցիների մեջ՝ 2:3-ի: Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ՝

- 1) տղաները շատ են ավելի քան 4%-ով                      2) տղաները շատ են, բայց 4%-ից քիչ չափով  
3) աղջիկները շատ են ավելի քան 4%-ով                      4) աղջիկները շատ են, բայց 4%-ից քիչ չափով

7. Վազգենն իրար հետևից գրում է բնական թվերը՝ 12345678910111213... և դադարեցնում է գրելը, երբ առաջին անգամ նկատում է իրար հետևից երեք անգամ գրված 7 թվանշանը: Քանի՞ թվանշան գրեց Վազգենը:

- 1) 146                      2) 78                      3) 156                      4) այլ պատասխան

8. Զամբյուղում եղած 500 գնդակների 80%-ը կարմիր է, իսկ մնացածը՝ կապույտ: Քանի՞ կարմիր գնդակ է պետք հանել զամբյուղից, որպեսզի այնտեղ մնացած գնդակների 75%-ը լինի կարմիր:

- 1) 25                      2) 50                      3) 75                      4) 100

Տևողությունը – 150 րոպե

9. Երկու թվերի գումարը հավասար է 232: Գտնել այդ թվերի արտադրյալը, եթե նրանցից մեկը մյուսի բաժանելիս քանորդում ստացվում է 3, իսկ մնացորդում 28:
- 1) 19488            2) 11152            3) 9231            4) այլ պատասխան
10. Ամենաշատը քանի՞ հատման կետ կարող են ունենալ 4 շրջանագծերը:
- 1) 8            2) 10            3) 11            4) այլ պատասխան
11. Եռանիշ թիվը բազմապատկեցին իր թվանշանների գումարով և արդյունքում ստացվեց 2254: Գտնել այդ թիվը:
12. Գտնել այն եռանիշ թիվը, որը 37-ի բաժանելիս մնացորդում ստացվում է 31, իսկ 38-ի բաժանելիս՝ 12:
13. 1, 2, 3, 4, 5, 6 թվանշաններն օգտագործելով մեկական անգամ կազմում են երկու եռանիշ թվեր: Գտնել այդ թվերի դրական տարբերության ամենափոքր հնարավոր արժեքը:
14. Գրատախտակին գրված են 1, 2 և 3 թվերը: Ամեն քայլի թույլատրվում է այդ թվերից որևէ մեկը փոխարինել իրենից 3-ով կամ 5-ով մեծ թվով: Ամենաքիչը քանի՞ քայլ է պետք անել, որպեսզի գրատախտակին գրված երեք թվերը դառնան իրար հավասար:
15. 2 կովն ու 12 հորթը արժեն 57 ոչխար, իսկ 6 կովն ու 4 հորթը՝ 59 ոչխար: Միասին քանի՞ ոչխար արժեն 1 կովն ու 1 հորթը:

Առարկայական հանձնաժողովի  
նախագահ՝



Սմբատ Գոզյան